ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՄԻՈՒԹՅԱՆ ՄՇՏԱ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵ
ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐԸ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐ

Մշտական հանձնաժողովները.

Միությունն ունի վեց մշտական հանձնաժողով՝

- Իրավական-օրենսդրական հարցերի,
- Գենդերային, առողջապահական և սոցիալական հարցերի,
- Ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի,
- Կրթության, երիտասարդության, մշակույթի և սպորտի հարցերի,
- Կայուն զարգացման հարցերի,
- Գյուղական տարածքների, փոքր, լեռնային, սահմանամերձ բնակավայրերի զարգացման, միջհամայնքային համագործակցության հարցերի:

Հանձնաժողովներն օժանդակում են Միությանը իրենց մասնագիտացման ոլորտի քաղաքականությունների մշակման և առաջմղման գործում: Հանձնաժողովի անդամներ կարող են լինել Միության անդամ բոլոր համայնքների ղեկավարները, ավագանու անդամները և համայնքային ծառայողները:

Համաժողովները

Միության համաժողովներն են՝

- Ավագանիների համաժողովը,
- Համայնքային ծառայողների համաժողովը,
- Գյուղական համայնքների համաժողովը:

Համաժողովները գումարվում են տարին մեկ անգամ և կարող են ընդունել ուղերձներ, հայտարարություններ, մշակել և Միության կառավարման մարմիններին ներկայացնել ոլորտային առաջարկություններ:

Աշխատանքային խմբերը

Միության հովանու ներքո գործում են նաև մի շարք աշխատանքային խմբեր:

«Ֆրանսիա» խումբը գործում է 2010 թվականից, միավորում է Ֆրանսիայի քաղաքների և ռեգիոնների հետ համագործակցություն ունեցող Հայաստանի քաղաքները և մարզերը:

«Հայաստանի էներգաարդյունավետ համայնքների դաշինք» աշխատանքային խումբը գործում է 2016 թվականից: Խմբի նպատակն է համայնքներին տրամադրել տեղեկատվություն նոր տեխնոլոգիաների, ներդրումների, զարգացման, համագործակցության և փորձի փոխանակման, էներգետիկ ռեսուրսների արդյունավետ օգտագործման, էներգետիկ անվտանգության բարձրացման, որակյալ էներգետիկ ծառայությունների մատուցման, շրջակա միջավայրի պահպանության և համայնքային կայուն զարգացման հարցերի վերաբերյալ: Խմբի քարտուղարության գործառույթը համատեղ իրականացնում են Հայաստանի Էներգախնայողության աջակցման հիմնադրամը և Հայաստանի համայնքների միության աշխատակազմը:

«Քաղաքապետերը հանուն տնտեսական զարգացման» խումբը գործում է 2017 թվականից: Խմբի աշխատանքներին մասնակցում են ԵՄ կողմից իրականացվող համանուն նախաձեռնության մեջ ներգրավված համայնքները: Նախաձեռնության նպատակն է զարգացնել տեղական իշխանությունների կարողությունները՝ ի նպաստ տեղական տնտեսական զարգացման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ